Պարոն/Տիկին Զ. Ստեփանյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

«16» 10 2023թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝** Զարուհի Ստեփանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Բրյուսել, Բելգիա, 2023 թվականի հոկտեմբերի 11-13-ին:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER) և ԵՄ-ն հանուն էներգետիկայի ծրագիր (EU4Energy):

5.**Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Մասնակցել Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) և ԵՄ-ն հանուն էներգետիկայի ծրագրի (EU4Energy) շրջանակում կազմակերպված միջազգային հարաբերությունների և նախագծերի կառավարման եռօրյա դասընթացին:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Միջազգային հարաբերությունների և նախագծերի կառավարման դասընթացը նախատեսված էր Եվրոպական միության արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրների էներգետիկայի կարգավորման ազգային մարմինների և նախարարությունների միջազգային կառույցների հետ աշխատող ներկայացուցիչների համար: Նիստին մասնակցում էին ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչները:

Դասընթացի նպատակն էր զարգացնել մասնակիցների կարողությունների միջազգային ծրագրերի կազմակերպման և հաղորդակցման հարցում:

Դասընթացի ընթացքում ներկայացվել է Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) կողմից՝ որպես Եվրոպական միության անդամ երկրների էներգետիկայի բնագավառի կարգավորող մարմինների միասնական ձայն ներկայացնող կազմակերպության, գործառույթները, գործունեությունը, աշխատանքային խմբերը և դրանց ուղղվածությունները, ինչպես նաև CEER դերը Եվրոպական միության կառույցներում, ներկայացվել է նաև CEER անդամակցության հնարավորությունները և անդամներին ներկայացվող պահանջները, որոնք են՝ կարգավորող մարմնի անկախությունը, ինչպես նաև նրանց դերը և պատրաստակամությունը կայուն կարգավորող գործելակերպը խթանելու և Եվրոպական միության սահմաններում և դրանից դուրս մրցակցային շուկաները զարգացնելու հարցում:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին նաև ԵՄ կարգավորող մարմինների միջև միջազգային համագործակցության, անկախ կարգավորող մարմինների գործառույթների իրականացման նախադրյալները, օրենսդրական նախագծերի և ենթաօրենդսդրական ակտերի նախապատրաստումը, ինչպես նաև Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) և Եվրոպական միության երկրների էներգետիկ կարգավորողների համագործակցության գործակալության (ACER) առանձնահատկությունները:

Ներկայացվեցին նաև ԵՄ-ն հանուն էներգետիկայի ծրագրի (EU4Energy) նախաձեռնության 2021-2026 թվականները իրականացվող երկրորդ փուլի նպատակները, ձեռքբերումները, հաղորդակցման և տեսանելիության ուղղությամբ իրականացված քայլերը, ինչպես նաև ապագա ծրագրերը և գործունեությունը:

Ծրագրի տեսանելիության շրջանակում տպագրված «Ապակե գլոբուսը» երեխաների գրքի տարածումը ապահովելու նպատակով՝ ծրագրի ներկայացուցիչները նախատեսում են այցելել ԵՄ ԱԼԳ երկրների դպրոցներ և ներկայացնել մաքուր էներգիայի և կայուն զարգացման նախադրյալները դպրոցական տարիքի երեխաներին: Նման ծրագիրը առաջինը իրականացվելու է Վրաստանում, որից հետո ծրագրի ներկայացուցիչները կապ կհաստատեն այլ ԵՄ Ալգ երկրների կարգավորող մարմինների հետ՝ հետագա քայլերը քննարկելու նպատակով:

Եվրոպական միության հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների գլխավոր վարչության (DG NEAR) աշխատակիցների կողմից ներկայացվեցին ԵՄ ԱԼԳ տարածաշրջանի համար նախանշված առաջնահերթությունները, տեսլականը և դրանց հասնելու նպատակով վերջին տարիներին իրականացված ծրագրերը, ինչպես նաև ֆինանսական և տեխնիկական աջակցության հնարավորությունները: Մասնավորապես նշվեց, որ վերջին տարիներին ԵՄ ԱԼԳ տարածաշրջանում էներգետիկայի բնագավառում ԵՄ աջակցության TAIEX և TWINNING գործիքների օգնությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են էներգետիկ շուկաների զարգացմանը և ԵՄ ինտեգրամն գործընթացի խթանմանը:

Հանդիպման երկրորդ օրը նվիրված է ծրագրերի ղեկավարման գործնական դասընթացին, որի ընթացքում Ավստրիայի կարգավորող մարմնի ներկայացուցչի կողմից տրվեց գործնական տեղեկատվություն ԵՄ աջակցության գործիքների միջոցով ծրագրերի կազմակերպման վերաբերյալ:

Մասնակցիների հետ քննարկվեց ծրագրերի նախագծման գործընթացը, ծրագեգրի ղեկավար թիմի անդամների պարտականությունները, նպատակների ճիշտ ձևակերպումը, գործընկերների ընտրությունը, ղեկավարման տարբեր գործիքների օգտագործումը: Մասնակիցները ներկայացրեցին նաև իրենց կողմից իրականացված ծրագրերի ընթացքում առաջացած խնդրները, խոչընդոտները և դրանց լուծման համար իրականացված քայլերը:

Միջոցառման վերջին օրը մասնակիցները հրավիրված էին ԵՄ-ում, Բելգիայում և Լյուքսեմբուրգում Հայաստանի դեսպանություն՝ դեսպանի հետ էներգետիկայի բնագավառում առկա իրավիճակը և խոչընդոտները քննարկելու նպատակով: Մասնավորապես շեշտվել է էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի իրականացման և ԵՄ կառույցների միջազգային համագործակցության խորացման կարևորությունը, որի արդյուքնում դեսպանատունը իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել հանձնաժողովին և նախարարությանը էներգետիկայի բնագավառին առնչվող հարցերում:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման արդյունքներով պայմանավորված՝ ԵՄ-ն հանուն էներգետիկայի ծրագրի (EU4Energy) ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) հետ՝ հետագայում իրականացվող ծրագրերին աջակցելու մասով:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Եվրոպական միության հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների գլխավոր վարչության (DG NEAR) ներկայացուցիչների հետ հանձնաժողովի կողմից հետագայում ԵՄ աջակցության TAIEX և TWINNING գործիքների օգնությամբ միջոցառումների կազմակերպման մասով:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Հաշվի առնելով միջոցառման ընթացքում ներկայացված տեղեկատվությունը և քննարկումների արդյունքները՝ առաջարկում ենք.

- Շարունակել համագործակցությունը և համատեղ աշխատանքները ԵՄ ԱԼԳ և ԵՄ կարգավորող մարմինների, ինչպես նաև ԵՄ-ն հանուն էներգետիկայի ծրագրի (EU4Energy) և էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) հետ օտարերկրյա պետությունների կարգավորող մարմինների համապատասխան փորձի ուսումնասիրության ուղղությամբ և Հայաստանում դրա հետագա ներդրման նպատակով:

- Հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն շարունակել երկկողմ քննակումները և աշխատանքները էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) հետ՝ անդամակցության հայտի նախապատրաստման մասով:

Գործուղվող ---------- 16.10.2023թ. ---------- ***Հ.Ստեփանյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 879-ԳՔ, 05.10.2023թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Զարուհի Ստեփանյան, միջազգային համագործակցության բաժնի պետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ Բրյուսել /Բելգիա/

5. Գործուղման ժամկետները՝ 10.10.2023-14.10.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ճանապարհածախս,գիշերավարձ:

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Զարուհի Ստեփանյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		

Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	115	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	49,772.0	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	248,860	248.9
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		248.9	248.9

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

16.10.2023թ.